ОБЯЗАТЕЛЬНЫЙ
ЭКЗЕМПЛЯР

ՀԱՄԱՌՈՏ ՀՐԱՀԱՆԳ

ՍԻՖԻԼԻՍՈՎ ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

616.9
Հ-21

ԱՌԺՈՂԿՈՄԱՏ—ՍԱՆԼՈՒՍԲԱԺԻՆ
1939

31 MAY 2013

6999

1663
40

616.9
2-21

30 JUL 2010

ՀԱՄԱՌՈՏ ՀՐԱՀԱՆԳ

ՍԻՖԻԼԻՍՈՎ ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Սիֆիլիսը վարակիչ հիվանդություն է, որը կարող է յերկար տարիներ տևել:

2. Սիֆիլիսով հիվանդացած անձը մինչև լիովին առողջանալը պետք է զգուշանա, որպեսզի հիվանդությունն առողջ մարդկանց չփոխանցի:

3. Սիֆիլիսն ամենից հեշտ փոխանցվում է սեռական հարաբերության ժամանակ, բայց կարելի յե փոխանցել նաև համբույրների, կրծքով կերակրելու, ուտելու և խմելու պարագաների (բաժակ, դդալ և այլն) միջոցով, ինչպես նաև ուրիշ առարկաների միջոցով, որ-

ՊՈՒ ԱԳ 6 Հ

բոնք յեղել են սիֆիլիսով հիվանդ տղամարդու կամ կնոջ բերանում. ինչպես, որինակ, ծխամորճը, ծխախոտը, ծծակը և այլն։

4. Սիֆիլիսը բուժելի յե, բայց պետք է բուժվել բժշկի, և վոչ թե հեքիմի մոտ և բուժումը պետք է կրկնել մի քանի անգամ, ինչպես կնշանակի բժիշկը։

5. Վորքան շուտ սկսվի բուրժումը և վորքան կանոնավոր տարվի այն, այնքան ավելի հեշտ է ազատվել հիվանդությունից։

6. Հենց վոր յերևան գան հիվանդության նշանները (բերանում, սրբանում, սեռական օրգանների կամ մաշկի վրա), պետք է անմիջապես բժշկի դիմել։

7. Նույնիսկ այն դեպքում, յերբ սիֆիլիսով հիվանդն իրեն լավ է զգում և հիվանդության վորևե նշան չի նկատում, այնուամենայնիվ պետք է յերկու-յերեք ամիսը մեկ անգամ այցելի բժշկին։ Բժիշկը կարոշի, արդյոք վերջնականապես բժշկվե՞լ է նա թե վոչ։

8. Բուժումից միայն յերեք-չորս տարի անց հիվանդը կարող է ամուսնանալ և այն էլ բժշկի հետ խորհուրդ անելուց հետո, այլապես նա սիֆիլիսով կվարակի կնոջը, և նրա յերեխաները կարող են սիֆիլիսով հիվանդ ծնվել։

9. Սիֆիլիսով հիվանդ կինը յուրաքանչյուր հղիության ժամանակ պետք է բուժման առնվազն յերկու ընթացք կատարի, դրանից հետո միայն յերեխան առողջ կծնվի։

10. Հիվանդը պետք է ժուժկալ լինի և զուսպ ապրելակերպ ունենա, դինի, ողի չպետք է խմի։ Չպետք է ծխի։

11. Բուժվելու ժամանակ որևէ մի քանի անդամ պետք է ողողել բերանը և մաքրել ատամները:

12. Վեներոլոգիական հիմնարկները ցույց են տալիս բժշկական ոգնություն, կատարում են հետազոտություններ, խորհուրդներ և ցուցումներ են տալիս անխտիր բոլոր աշխատավորներին:

13. Ամոթ բան չէ սիֆիլիս ունենալը, բայց դա լուրջ հիվանդություն է, որի դեմ բժիշկները հաջող կարող են պայքարել միայն այն ժամանակ, երբ հիվանդը կատարում է բժշկների բոլոր ցուցումները:

14. Սիֆիլիսով հիվանդացած յուրաքանչյուր վոք պարտավոր է վոչ միայն ինքը կանոնավոր բուժվել, այլև բժշկին անմիջապես հայտնել այն անձի անունը, ազգանունը և հասցեն, վորից ինքը վարակվել է: Հիվանդ ազամարդը կամ կինը դրանով կոգնի վեներոլոգիական հիմնարկներին այն պայքարում, վորը մղվում է վեներական հիվանդությունների դեմ:

15. Վեներական հիվանդությամբ ուրիշին վարակելու համար մեղավորը պատժվում է քրեական որենսգրքի 150-րդ հոդվածով: (Ազատազրկում մինչև 3 տարի):

ՀԽՍՀ ԱՌԺՈՂՈԿՈՄԻ ՄԱՇԿԱ-ՎԵՆԵՐԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Պատ. խմբագիր՝
բժ. Ն. ՅՈՒԶԲԱՇՅԱՆ

6999

9813.

Գլավլիտի լիազոր՝ Բ—1009
Գատ. № 901 Տիրաժ 3000

Հայկական ԽՍՀ ԺԿԽ-ին կից „Խ. Հ."
Իրատ. տպարան, Ցիրեվան